Հայտարարություն

ՀՀ Կոտայքի մարզի «Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում առաջացել են թափուր աշխատատեղեր. անգլերենի ուսուցչի և մաթեմատիկայի ուսուցչի / երկու դրույքաչափ/՝

1.անգլերեն - 14 դասաժամ,
2.մաթեմատիկա - երկու դրույքաչափ:

Թափուր տեղերը կհամալրվեն օրենքով սահմանված կարգով, համաձայն «Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգի» պահանջների կանցկացվեն մրցույթներ: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1) հանձնաժողովի անունով գրավոր դիմում, նշելով այն Թափուր տեղի անվանումը, որին հավակնում է (Ձև 1),
2) Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3) անձնագրի պատճենը,
4) ինքնակենսագրություն (Ձև 4),
5) Թափուր տեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են հուլիսի 17-ից մինչև օգոստոսի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15: 00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 20-ին՝ ժամը 14:00-ին, Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Գեղաշեն, 1-ին փողոց, շենք 83: